



ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՆԱՓԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՈՒՂԵԻՆ ՈՐՈՒԹԻՆԻՆ

Յուլիսի 4-ին Ազգիս Վեհափառ Հայրապետը ժամանեց Բորժոմի ուր օթեկանեց Մեծ Իշխան Միքայէլ Նիկողայէի հին ապարանքում։ Նորին Օծուծիւնը կէս օրուան ժամը 2-ին այցելեց Մեծ Իշխան Նիկողայ Միխայելովիին, որից սիրով հիւրընկալուեցաւ և որի փոխայցելութիւնն ընդունեց երեկոյեան ժամը 5-ին։

Բորժոմում Նորին Սրբութեան ներկայացան հայ հասարակութեան պատգամաւորներն ու տեղական ամառանոցաւորները, որոնց ցնծութեան շափ չը կար, որ արժանացել էին Հայրիկի տեսութեան։

Յաջորդ օրը Վեհափառ Հայրապետը իւր շքախմբով և Եխայցխայի պատգամաւորների ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ դէպի Եխայցխայ, ուր և ժամանեց երեկոյեան դէմ։ Ընդառաջել էին մի ահագին բաղմունքիւն, որի բարձրագոյն «կեցցէաների ձայնը օղն էր թնդեցնում։

Վեհափառ Հայրիկը անհուն ցնծութիւն պատճառեց Եխայցխայի հայ հասարակութեան՝ երբ շաբաթ օրը հանդիսաւոր պատարագից յետոյ մի քարոզ խօսեց, այն քարոզներից մին, որ միմիայն Հայրիկը գիտէ խօսել։

Յուլիսի 8-ին Վեհափառ Հայրապետը ուղեւորուեց Արասթուման ամառանոցաւայրը, ուր յաջորդ օրը մեծ հանդիսով ներկայացաւ Նորին Վայսերական Մեծութեան Թագաժառանգ Գէորգի Ալէքսանդրովիին, Արասթումանի հայ հասարակութիւնը ցնծութեան աղաղակներով ընդունեց Հայոց Հայրապետին, շտապեց առնել Նորա օրհնութիւնն և երբ եկաւ բաժանման ժամը, «կեցցէաների բարձրաթնդին ձայնով ճանապարհ ձգեց կրկին դէպի Եխայցխայ։

Յուլիսի 11-ին մեծ բաղմունքեան ուղեկցութեամբ ճանապարհ ընկաւ Վեհ. Հայրապետը դէպի Եխալքալակ, ուր ժամանեց նոյն օրը երեկոյեան, ամրոցը քաղաքն ու շրջակայ հայ գիւղօրէից ժողովուրդն ընդառաջել էր Հայրիկին։

Մեծ էր հայ ժողովրդի սիրոյ արտայայտութիւնը առ իւր պաշտելի Հայրիկին։

Եխալքալակի եկեղեցին խախտուած լինելով ժամանակաւոր մի ամբիոն էր շինուած, ուր Հայրապետը իւր սովորական աղօթքն արաւ։

Երկու օր հայ ժողովրդին մոխթարեւոյց յետոյ, Նորին Սրբութիւնն ուղեւորուեց դէպի Ալէքսանդրոպոլ, ճանապարհին դիշերելով յաջորդ օրը ճաշու միջոցին Ազգիս Հայրապետն իւր շքախմբով և անհամար ընդառաջողների ուղեկցութեամբ մտաւ Ալէքսանդրոպոլ, Անեկարագրելի է հայ հասարակութեան սրտեղանդն ընդունելութիւնը, այդ մի յաղթական մուտք էր ժողովրդի սրտին տիրող մի մեծ զօրավարի։

Յուլիսի 15-ին Վեհ. Հայրապետը հանդիսաւոր պատարագից յետոյ մի քարոզ խօսեց ս. Թագէտ առաքելոյ և ս. Սանդուխտ կուսի յիշատակը բացատրելով։

Յուլիսի 17-ին Վեհ. Վաթուղիկոսը ուղեւորուեց Հառիճոյ վանքը, ուր գիշերելուց յետոյ, միւս օրը շարունակեց ճանապարհն ու հասնելով Բաշ Ապարան, դիշերեց այնտեղ, Յուլիսի 18-ին գիշերեց Մոշնու ս. Գէորգ վանքում և 20-ին ժամանեց Մայր Աթոռ ս. Եփրեմեայ բացակայութիւնից յետոյ։

Ս. Էջմիածնի միաբանութիւնը դիմաւորեց սիրեցեալ Հայրապետին, որ հանդիսաւոր թափօրով մտաւ Մայր Տաճարն ու աղօթքից յետոյ մոխթարեց միաբանութիւնը աւետելով իւր ուղեւորութեան յաջող ելքը։

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ազգիս Վեհ. Հայրապետը Մայր—Աթոռս ժամանելուն յաջորդ օրը Ս. Էջմիածնի ամրոցը միաբանութիւնը ներկայացաւ Նորին Օծութեան, Հայրապետական տեղապահ Մեսրոպ Արքեպիսկոպոսը ողջունեց Ազգիս Հայրապետի ողջամի ժամանումն և յայտնեց միաբանութեան մեծ խնդութիւնը, որ արժանացաւ իւր Հօր տեսութեան, Նորին Օծութիւնը յայտնեց իւր գոհունակութիւնն, որ միաբանութիւնը ողջամի տեսնում է։

Միաբանութիւնից յետոյ ներկայացան Վեհ. Հայրապետին ճեմարանի աշակերտներն և ապա ժողովուրդը, որոնց ամէնին ևս օրհնեց։

22-ին յուլիսի Մայր Թագուհու անուանակոչութեան օրը հանդիսաւոր պատարագ մատուցաւ Մայր Տաճարում ի ներկայութեան Նորին Վեհափառութեան, ամրոցը միաբանութեան և ժողովրդի խուռն բաղմունքեան։ Ս. Պատարագից յետոյ Վայսերական մաղթանք կատարուեցաւ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Ազգիս Ահհափառ Հայրապետն Յու-
լիսի 22-ին Մայր Թագունի—Մարիա Փէօ-
ղորովնայի Անուանակոչութեան տօնի առթիւ
հիանելով հեռագիրն առաքեց.

ՊԵՏԵՐԷՆՈՒ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԵՂՈՒՆՈՅ ԿԵՅՍՐՈՒՆԻՈՅ

ՄԱՐԻԱ ՖԵՕԳՈՐՈՎՆԱՅԻ

Չարժանացեալ իմ անձամբ ան-
ձին արտայայտել Ձերոյ Մեծնութեան
զանչուն զգացմունս անձնուիրու-
թեան իմոյ ոչ ի Պետերհոֆ և ոչ
յԱրաթուման, յոյժ բարերազդ
համարիմ զանձն, զի զարձ արար-
եալ յերկար ճանապարհորդութե-
նէս, զկնի առաջին պատարագին
մատուցանելոյ ի ներկայութեան ի-
մում ի Մայր Տաճարիս Ս. Էջմի-
ածնի, այժմ միաբանական ուխտի-
ւրս կատարեցի գոհացողական մաղ-
թանս ի մեծի աւուրս Անուանակո-
չութեան Ձերոյ Մեծնութեան վերա-
ռաքելով առ Ամենաբարձրեալն ա-
ղօթս ջերմագինս վասն բարօրու-
թեան և արեւատութեան Մեծի
Մօրդ — Կայսրուհոյ և համայն
Թագաւորոյ Տանն լայնածաւալ
Ռուսիոյ:

ՄԿՐՏԻՉ ԿԵԹՈՒՂԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՋԵՈՅ.

Ի պատասխանի ստացուեց ՆՈՐԻՆ
ԿԵՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ հեռակալ հե-
ռագիրը.

Է.Ջ.ՄԻԱՅԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԿԵԹՈՒՂԿՈՍԻՆ.

Ի հոգի շնորհակալ եմ ի Ձէնջ
վասն աղօթից և արտայայտեալ առ
Իս զգացմանցդ: Յաւիմ, զի չկա-
րացի տեսնել զՁեզ:

ՄԱՐԻԱ.

Յուլիսի 23-ին Նորին Ահհափառութիւնը
կիւրակի օրը մի աղբու քարոզով միխթարեց ժո-
ղովրդին. Ս. Պատարագից յետոյ հանդիսաւոր ծաշ-
կերոյթ տրուեցաւ միաբանութեան օրինակայ Էր
Խքը Ահհ. Հայրապետը:

Այդ հանդիսաւոր ծաշին մասնակցեցին և Ե-
րևանից եկած հայ հասարակութեան ներկայացու-
ցիչները, որոնք շտապել էին Նորին Ահհափառու-
թեան ժամանակը շնորհաւորելու:

Օգոստ. 25-ին Նորին Ահհ. ուղեւորուեցաւ Ե-
րևան, կիւրակի օրը, ամսոյս 27-ին, մի խրատական
քարոզ խօսեց ս. Սարգիս եկեղեցում, իսկ հետե-
ւալ օրը վերադարձաւ Մայր Աթոռս:

Օգոստ. 30-ին, Նորին Ահհափառութիւնը
բարեհաճեց Իւր Դիւանի կառավարիչ արժ. Յուսիկ
վարդապետ Զոհրաբեանին նշանակել ճեմարանի դա-
սատու: Իսկ Հայրապետի Դիւանական կառավարիչ և
զիւանապետ նշանակել բարձրագատիւ Նահապետ
Վ. Նահապետեանին:

Նորին Ահհափառութեան Մայր—Աթոռս ժա-
մանելուց յետոյ առանձին եռանդեամբ սկսուած են
Նոր շինութիւններ և վերանորոգութիւններ, որոնց
մասին «Արարատի» առաջիկայ համարում մանրա-
մասն հաշիւ կը տպագրենք:



Ի. ՌԻՍԱՀԱՅԲ.

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄ.

Ն. ՂԱՄԲԱՐԵԱՆՅԻ ԿՏԱԿԸ

ՊԱՏՃԵՆ

Հոգաբարձութիւն Ներսիսեան Ազգային
հոգեւոր Դպրոցի յայտարարում է ի գիտու-
թիւն որոց կվերաբերի, քաճրաստիճան
Ստեփան Ղամբարեանցի ամուսին հանգու-
ցեալ Նունէ Ղամբարեանցի հետեւեալ նուէր-
ատուութեան եւ նորա պայմանների մասին,
որոնք արած են 28 Օգոստոսի 1891 ամի:
« Յանկանալով յորդորել Թիֆլիզի Ներսիս-
եան հոգեւոր Դպրանոցի և Ս. Էջմիածնի
« հոգեւոր ճեմարանի սաներին աստիճանաց
« յետոյ շարունակելու գործել զբական աս-
« պարիզում եւ միեւնոյն ժամանակ վարձա-
« տրել նրանց զբական գիտնական առաջին
« աշխատութիւնները Կովկասի եւ Փոքր Ա-
« սիայի ազգութիւնների պատմութեան, զրա-
« կանութեան եւ ազգագրութեան ուսում նա-
« սիրութեան վերաբերեալ, յարգելի Հոգա-
« բարձութիւնից խնդրում եմ ընդունել յօ-
« ղուտ Ներսիսեան հոգեւոր դպրանոցի Նուէր
« ինձնից երեք հազար ուրուխ 4⁰⁰/₁₀₀ արժե-
« թողութեամբ եւ գործադրել հետեւեալ կեր-
« պով: 1. Իմ նուէրը պիտի լինի անձեռնըն-
« մխելի մայր գումար, այդ գումարից զոյա-

«նալիք $0/0$ -ից» որ չորս տարուց կհասնի
«մօտ հինգ հարիւր ոտըլի» ամէն չորս տա-
«րին մի անգամ» պիտի տրուի երկու մրցա-
«նակ՝ առաջինը մօտ չորս հարիւր ոտըլի եւ
«երկրորդը հարիւր ոտըլի» որպէս վարձա-
«տրութիւն ամենաընտիր աշխատութիւնների
«գրուած հայկական լեզուով նովկասի եւ
«Փոքր Ասիայի ազգութիւնների պատմութեան»
«գրականութեան եւ ազգագրութեան մասին»:
«2. Մրցանակաբաշխութեան մասնակցելու
«թոյլատրվում» է ներսիսեան հոգետոր դըպ-
«րանոցի եւ Ս. Էջմիածնի հոգետոր ճեմարա-
«նի այն ըուրր աւարտած սաներին որոնք ի-
«րանց ուսումն» աւարտել են մրցանակաբաշ-
«խութեան օրից ոչ աւելի առաջ քան հինգ
«տարի»:
«3. Մրցանակները տրվում» են առան-
«ձին մասնակիւնից» քաղկացած հինգ հոգուց»
«որոնց ընտրում» է ներսիսեան հոգետոր դըպ-
«րանոցի ուսուցչական ընդհանուր ժողովը իր
«միջից եւ մասնաւոր անձերից»:
«Որպէս ցան-
«կութիւն» յայտնում» եմ՝ կարծիքս» որ գոնէ
«երկու անդամները միշտ ընտրուին մասնա-
«ւոր հեղինակաւոր անձերից»:

Յիշեալ պայմանների հիման վերայ, ա-
ռաջին մրցանակաբաշխութիւնը հանգուցեալ
Ղամբարեանցի լինելու է տարւոյս վերջին ա-
միսներին հետեւեալ կերպիւ։—

1. Հեղինակութիւնները պէտք է ու-
ղարկուին ներսիսեան Դպրանոցի Հոգաբար-
ձութեանը, ոչ ուշ քան 1-ն Սեպտեմբրի:

2. Հեղինակութիւնները պէտք է ունե-
նան խորագիր, իսկ հեղինակի անունը պէտք
է նշանակած լինի փակ ծրարի մէջ, նոյն խո-
րագրի տակ, որպիսի ծրարը քացուելու է մի-
այն մրցանակաբաշխութեան որոշումից յետոյ:

3. Մրցանակատուութեան հարցը որո-
շելուց յետոյ, հեղինակութիւնները կարելի է
յետ ստանալ կամ՝ անձամբ, կամ՝ հաւատար-
մաթղթով:

4. Մրցանակի արժանացած շարադրու-
թիւնների, նոցա հեղինակների եւ տարած
պրեմիայի քանակութեան մասին կհրատա-
րակուի լրագիրներում:

5. Առաջին պրեմիայի քանակութիւնը
հաասար է $1/3$ -ականի մայր գումարի: առ 1-
առաջիկայ Սեպտեմբրի գոյացած տոկոսիցի,
իսկ երկրորդ պրեմիայն $1/5$ -ականի նոյն տո-
կոսիցի: Բաշխելու գումարի քանակութիւնը
կլինի ընդամէնն փոքր աւելի քան չորս հար-
իւր ոտըլի:

Ի վերայ իսկականին ստորագրեալ է Հերթակալ
Հոգաբարձու Բ. ՄԵԼԻԻՔ—ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆ.

ՄԻՂԷ Է. Գործավար խորհրդոյ Հոգաբար-
ձութեան ներսիսեան Հայոց Հոգեւոր
գալոցի Բ. ՄԵԼԻԻՔ—ԱԹԱՄԵԱՆ.



ՀԱՄԵԼԻՈՒԹԻՄ.

Վիճակագրական տեղեկութիւններ Համախու թե-
մի եկեղեցական ծխական դպրոցների մասին՝ վասն
1893—94 ուսումնական ամի:

Ա.

Դպրոցների թիւն էր 18, որոնցից 9 քաղաք-
ներում և 9 գիւղերում: Նրանցից 13 միդասեան,
5 երկդասեան, տղայոց՝ 12 և օրիորդաց՝ 6:—

18 դպրոցներից հիմնուած են 1858 թուականում՝
1. 1870 թուականում՝ 2. 1871 թուականում՝ 2.
1880 թուականում՝ 3. 1887 թուականում՝ 1.
1889 թուականում՝ 1. 1890 թուականում՝ 2.
1893 թուականում՝ 1. և 1894 թուականում՝ 5.

Բ.

18 դպրոցներից 11-ը ունին սեպհական շի-
նութիւն, իսկ 7 ղետեղուած են մասնաւոր ան-
ձիքներից վարձուած շինութիւններում: Վերջին-
ներիս թուումն են Բագուայ դպրոցները, որք
ղետեղուած են Մարգարիթական Վեկերութեան շի-
նութիւններում և առանց վարձի:—

Գ.

Աշակերտելոց ընդհանուր թիւն էր՝ 1354, ո-
րոնցից 848 տղաք, իսկ 506՝ օրիորդներ:—

Աշակերտեալների ամենամեծ մասը՝ վաճառա-
կանների և երկրագործների զաւակներ են:

Մէն մի 1-ը աշակերտ և աշակերտուհի
վճարում է տարեկան թոշակ քաղաքներում՝ 6—16
րուբլի, իսկ գիւղերում՝ 3—6 րուբլի.

Աղքատները ոչ միայն ազատ են թոշակի վը-
ճարումից, այլ և ձրիաբար ստանում են դպրոցնե-
րից ուսումնական պիտոյք, երբեմն ևս զգեստ ու
կօշիկ, Սոյն ուսումնական տարում իրանց ուս-
ման ընթացքը աւարտել են 52 տղաք և 35 օրի-
որդ:—Ընդ ամէնը 87 հոգի:—

Դ.

Դասատուների թիւն էր 53, որոնցից 40-ը ուսուցիչներ և 13-ը ուսուցչուհիներ:

Դրանցից ուսման ընթացքն աւարտել են՝

	Հոգի.
ա. Մայր—Աթոռոյ Գէորգեան ճեմարանում . . .	6
բ. Ուսուցչական ինստիտուտներում . . .	4
գ. Ուսուցչական դպրանոցներում (սեմնար) . . .	2
դ. Աղգային Հոգևոր դպրանոցներում . . .	15
ե. Պետական միջնակարգ դպրոցներում . . .	8
զ. Պետական ստորնակարգ դպրոցներում . . .	6
է. Աղգային նախկին միջնակարգ դպրոցներում . . .	8
ը. Առ տնին ուսումն են ստացել . . .	4

Ընդ ամենը 53 Հոգի.

Դրանցից ունին՝

	Հոգի.
ա. Կրօնուսուցչութեան վարկ (ցենդ) . . .	6
բ. Միջնակարգ դպրոցների ուսուցչի . . .	2
գ. Քաղաքային դպրոցների ուսուցչի . . .	6
դ. Քաղաքային ծխական—տարրական դպրոցների ուսուցչի . . .	17
ե. Գիւղական ծխական—տարրական դպրոցների ուսուցչի . . .	2
զ. Տնային վարժուհւոյ . . .	5
է. Չեռագործութեան վարպետուհու . . .	5
ը. Երգեցողութեան ուսուցչի . . .	6
թ. Չունին որ և է վարկ . . .	4

Դասատուները 20—50 տարեկան են:—Նըրանց պաշտօնավարութեան ժամանակը 1—25 տարուայ է հասնում: Բաց ի քահանայ ուսուցիչներից՝ մնացեալ բոլոր դասատուները բացառապէս ուսուցչութեամբ են պարապած այժմ:

Դասատուների ստացած տարեկան ուճկի քանակութիւնն է միջին թուով 400—800 ռուբլի:

Աւագները՝ ստանում են նաև 100 ռուբլի միդասեան և 200 ռուբլի երկդասեան դպրոցներում:

Բագու քաղաքի դպրոցների դասատուների ուճկաց քանակութիւնը սահմանեալ կոպարից 10 ռուբլի աւելի է ամէն մի դասի համար. իսկ աւագութեան համար՝ սահմանուած է 200 ռուբլի մի դասեան և 400 ռուբլի երկդասեան դպրոցներում:

Գիւղական դպրոցների (նոյնպէս և Գարբանդի) դասատուները, բաց ի սահմանեալ ուճկից, ձերիարար ստանում են նաև բնակարան, ծառայ, ջուր, վառելիք և ճրագ. և առաջին նուագում՝ ճանապարհածախը:

Ե.

1893—94 ուսումնական տարուայ սկզբում գոյութիւն ունեցող 13 դպրոցների տարեկան արդիւնքն էր՝

	Բ.	Կ.
ա. Դրամագլխի տոկոսիք . . .	3312	87.
բ. Թոշակադրամ . . .	5747	25.
գ. Ուսումնական պիտոյից տուրք . . .	82	61.
դ. Նպաստ եկեղեցիներից և վանքերից . . .	9142	18.
ե. Նպաստ Մարդասիրական ընկերութիւնից . . .	3500	—
զ. Պատահական նուէր . . .	6648	39.
	<u>Գումարն՝</u>	<u>28433 30.</u>

Զ.

Նոյն 1893—94 ուսումնական տարումը ծախսուած է՝

ա. Դասատուների ուճկաց համար՝	22116	83.
բ. Ռոճիկ սպասուորացի սպասուհւացի, վարձ բնակարանացի, կարկատան, վառելիք, ջուր, ուսումնական պիտոյք, ձեռագործի նիւթերու, դիւանական ծախք՝	4911	57.
	<u>Գումարն՝</u>	<u>27028 40.</u>

որ ի բաց բառնալով մուտքից՝ մնում էր մի հազար չորս հարիւր և չորս ռուբլի և ինսուն կոպէկ:

Է.

1894—95 ուսումնական տարուայ սկզբում դպրոցները ունէին՝

ա. Առ ձեռն դրամ՝ տրուած ի շահեցողութիւն դրամատներում և մասնաւոր անձանց . . .	43875	56.
բ. Դպրոցային շինութիւնների՝ արժողութեամբ . . .	22600	—
գ. Հիմնական և աշակերտական դրագարանների՝ արժողութեամբ . . .	2090	19.
դ. Ուսումնական պիտոյքներ արժողութեամբ . . .	557	65.
ե. Դպրոցական կահ կարասիների՝ արժողութեամբ . . .	3860	54.

Ընդ ամենը 72983 94.

Ը.

Բաց ի վերոյիշեալ եկեղեցական ծխական դպրոցներից՝ Նորին Օծութեան Ազգիս Անհափառ Հայրապետի բարեհաճ թոյլտուութեամբ՝ 1894—95 ուսումնական տարուայ սկզբից Սաղիանի ս. Ստեփանոս մենաստանում բացուած է ընծայարան, ուր աւանդուում էր՝ Քրիստոնէական վարդապետութիւն, Սրբաղան Պատմութիւն Հին և Նոր կրտակարանի, Եկեղեցական Պատմութիւն, Պարզ Աստուածապաշտութեան, եկեղեցական Տոմարագիտութիւն, Չայնագրութիւն, Անդու Հայոց և Ռուսաց և Թուարանութիւն:

Ընծայացուների թիւն էր՝ 8. Դասատուների-
նը՝ 3:—

Ընծայարանի տարեկան ծախքն էր 1500 ռուբ-
լի որ հոգացուել է Բուդաղեան եղբարց նուիրած
գրամագլխի (սկզբնականը՝ 10,000 ռուբլի) տոկո-
սից, ընծայացուների թիշակից և վանքի նպաստից:

Ընծայացուները գիշերօթիկ են և ընծայարա-
նի հաշուովն են կերակրուում:

Ռեմսկան Տեսուչ Եղիշէ Բ. Դեղամեանց.

ԱՍՏՐԱԼԱՆԻ ԹԵՄ.

Վեհափառ Հայրապետը օգոստոսի 29-ին տու-
ած կոնդակով (համար 214) հաստատեց թեմիս ա-
ռաջնորդ Գերապատիւ Արիստակէս եպիսկոպոսին՝
շնորհելով նրան աբբութեան պատիւ:



2. Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԸ.

Հրատարակելով ստորեւ ինչպէս խոստացել է-
ինք, Արմաշու գպրեւանքի առաջին սաների ձեռնա-
գրութեան աթիւ մեզ ուղարկուած թղթակցու-
թիւնը՝ աւելորդ չենք համարում մի քանի խօսք
ևս մեր կողմից ստել այդ նշանաւոր հաստատութեան
մասին:—Դպրեւանքի իսկական հիմնադիր և արգի
կազմակերպութեան հեղինակն է նոյն ինքն Արմաշի
փոխ վանահայր Գերապատիւ Մաղաքիա եպիսկո-
պոս Օրմանեանը, Կովկասի Հայոց ղեկավարութեմ
անձաւորութիւն, որ Կարնում առաջնորդ եղած ժա-
մանակ իրրեւ հայկական գատի քերմ պաշտպաննե-
րից մէկը յայտնի էր, ապա ս. էջմիածնի ձեմա-
րանում մի տարի աստուածարանութեան դասատուի
պաշտօն վարելուց յետոյ՝ վեց տարի է ի վեր ամե-
նարդիւնաւոր կերպով, թէեւ շատերից մոռացուած,
գործում է ահա Տաճկաստանի մի անկիւնում, Կու-
սակրօն հոգեւորականութեան մի նոր թարմ սերունդ
պատրաստելու գաղափարով ոգեւորուած՝ նա յաջողե-
ցաւ շուտով բարեկամներ գտնել Կ. Պօլսում պատրի-
արքարանի շուրջ, և ամեն խոչընդոտների յաղթելով,
անմիջապէս գործ սկսաւ. Դպրոցը տեղաւորելով առ-
ժամանակ Արմաշու վանքի հիւրատան սենականե-
րում, որ կարկատել, վերանորոգել պէտք էր, նա
իսկոյն ձեռք դարկաւ մի նոր համեմատարար փա-
ռահեղ շինութեան, ուր այժմ՝ զետեղուած է զըպ-
րօցը, վերանորոգեց եկեղեցին և զանազան վանքա-
պատկան շինուածքները, նոր ջրաղաց շինեց, որ մի

հարուստ բարերարի նուիրած մեքենայի շնորհիւ,
չընայած ջրի պակասութեան, բաւական արդիւնք է
բերում վանքին:

Արմաշ գտնուում է անտառոտ բլուրներով շր-
ջապատուած մի բարձրավանդակի վերայ, 5—6 ժամ
հեռաւորութեամբ՝ Նիկոմիդիա քաղաքից՝ դէպի երկ-
րի ներքը. բաւական գեղեցիկ դիրք ունի և ամա-
ռն ախորժելի օդ. բայց ձմեռը ցուրտ է այնտեղ,
իսկ գարնանը և աշնանը խոնաւ, ճանապարհից
դուրս լինելուն համար բնակութեան բաւական ան-
յարմարութիւններ ունի, Վանքի գլխաւոր եկամու-
տը ս. Խաչի մեծ ուխտն է. թէեւ ունի հոգեր, բայց
նոցա բերքը մեծ բան չէ. Օրմանեան սրբազանը կա-
րողացել է այնուամենայնիւ նոցա մի մասը շատ ար-
դիւնաւէտ դարձնել. թթենու տնկանոցներ է ձգել
և ուսեալ շերամարոյծ բերել տալով՝ շատ լաւ տե-
սակի շերամի սերմ է պատրաստել տալիս*. Այս ար-
դիւնքներով էէր կարելի հարկաւ գպրեւանքի պէս
մի հաստատութիւն պահել, շէնքեր կառուցանել.
գլխաւոր միջոցները Կ. Պօլսում հաստատուած խը-
նամակալութիւնն է ձեռք բերում: սակայն Օրմանե-
ան Սրբազանն է, որ օրինակելի տնտեսութեամբ այդ
սուղ միջոցներով գործ առաջ տանել և արթուն հըս-
կողութեամբ արդիւնքի նորանոր աղբիւրներ գտնել
է կարողանում:

Նորան գուգակից՝ գպրեւանքի համար մի ան-
փոխարինելի ոյժ է Արթ. Եղիշէ վարդապետ Դուր-
եանը, արժանայիշատակ բանաստեղծի եղբայրը, որ
իւր հայոց լեզուի և գպրութեան, կրօնական և
պատմական գիտութեանց մէջ ունեցած հմտութեամբ
և հասկացողութեամբ գրելի է նմանը չունի Տաճկա-
հայոց հոգեւորականութեան մէջ և ոչ մի բանով յետ
չէ մնում Միթիարեաններից, նա կարողացել է նաեւ
կրթել այնպիսի աշակերտներ, որոնք ամենայն յա-
ջողութեամբ Միթիարեանների հետ մրցել կարող են:
Օրմանեան Սրբազանը և Եղիշէ Վարդապետը կաղ-
մում են գպրացի ամբողջ գործօն ոյժը, բոլոր գըլ-
խաւոր առարկաների դասատուութիւնը նոցա վրայ
է. մէկի ձեռքն է ընդհանուր վերահսկողութիւնը
և արտաքին գործերի կարգադրութիւնը, միւսի ձեռ-
քը՝ ուսումնական մասի տեսչութիւնը և սաների ներ-
քին առօրեայ կեանքի վերահսկողութիւնը. միւս,
աշխարհական ուսուցիչները թարմատար ոյժեր են
միայն:

Եյսպէս այս երկու արժանաւոր հոգեւորականե-
րին յաջողել է Թատրուայ աշխատանքից յետոյ ընծա-

* Հրաւիրում ենք այս արդիւնաբերութեամբ պարս
պողների ուշադրութիւնը. գնողները եւ տարածողները վան-
քին բարեք արած կըլինին:

յիլ մեր եկեղեցուն 7 լաւ պատրաստուած կուսակրօն քահանաներ, որոնց պէտք է կարգ կարգ ուրիշները հետեւեն, Աթէ ի նկատ առնենք այն բոլոր տը-խուր պայմանները, որոնց մէջ գտնուում է հայ հոգեւորականութիւնն առհասարակ և Տաճկաստանում մասնաւորապէս, այն մեծ պակասութիւնը, որ ըզ-գացուում է ամեն տեղ արժանաւոր, իրենց կոչմա-նը վայել մտաւոր և բարոյական կրթութիւն ունե-ցող հոգեւորականների համար, և աւելի մեծ չափով պէտք է զգացուի, երբ ամենքիս սրտագին իղձերն իրականանան՝ Հայաստանում քաղաքական բարենո-րոգումներ մտցուին և հարկ լինի ժողովրդի կրօ-նական - բարոյական վիճակը նոյնպէս բարենորոգել, այն ժամանակ աւելի հասկանալի կլինի, թէ ինչ-պիսի միտքարական երեւոյթ է այս՝ իրենց կոչմանը արժանի 7 վարդապետներ միանգամից ձեռնադրուած տեսնել, Մենք անձամբ ծանաչում ենք նոցա և կա-րող ենք վկայել, որ շատ ժամանակ չանցած այդ խումբը արժանաւոր դիրք կը բռնէ տաճկահայ հոգեւո-րականութեան մէջ, իւր ունեցած պատրաստութեան, իւր բարոյական և հայրենասիրական ձգտումների շնորհիւ, Ապացոյց այն հանգամանքը, որ Կ. Պօլ-սի հայ թերթերը մի քանի շաբաթ շարունակ միաբերան փառաբանում էին Գպրեմանքը, նորա վա-րիշներին և սաներին, չընայելով որ գոցա մէջ կա-յին այդ հաստատութեան մինչև այժմ՝ ջնքմ հա-կառակորդներ, նորա վարկը, նորա նշանակութիւնը ամեն մի հանգամանքում՝ ձգել ջանացողներ, Դըպ-րեմանքը ակնյայտի արդիւնք է ցոյց տուել, այդ իրողութիւն է և այդ իրողութեան առաջ ստիպուած են լուել ամենքը, Կանխակալ կարծիքներով պաշար-ուած մեղադրում էին նորան, թէ նա կղերական ոգի է մտցնում հոգեւորականութեան մէջ, սքոլաս-տիքական դաստառութեամբ բխցնում է մտքերը, այժմ ամենքը տեսնում են, որ այդ ամենը սխալ է, որ Արմաշից ելածները շատ լաւ ժամանակակից կրթու-թիւն ունին և կանոնաւոր դարգացում, որ նոքա իրենց եկեղեցական կոչման համար անհրաժեշտ գիտելիք-ների մէջ հմուտ լինելով հանդերձ՝ անցնալի և ներկայի մասին ունեցած տեղեկութիւններով ու հասկացողութեամբ ետ չեն ամենեւին՝ դուրսը հե-ռու տեղեր ուսում առած մի շարք մեծախօս աշ-խարհականներից, որ նոքա վերջապէս իրենց բոլոր իմացածն ու զգացածը իրենց շրջապատող թշուառ ժողովրդի մէջ դուրս բերելու, իրենց եկեղեցուն ամենայն հաւատարմութեամբ ծառայելու պատրաստ են, - Յոյս ունենանք, որ ուրիշ նման պարագա-ների մէջ գտնուող հաստատութիւններ և ձեռնար-կութիւններ նոյնպէս ցանկալի արդիւնք ցոյց տալով՝ կըստիպեն իրենց զէմ խօսողներին յայտնի իրողու-

թեան առաջ խոնարհուիլ և իրենց սխալը խոստո-վանել, Իսկ Արմաշու դպրեմանքի համար մենք մի-այն կատարեալ յաջողութիւն և իւր բարերար գոր-ծունեութեան մէջ կրկնապատիկ ոյժ և եռանդ ցան-կալ կարող ենք, Անտարակոյս ամեն մի իւր եկեղե-ցու կամ ժողովրդի բարոյական յառաջագիմութեան համար նախանձախնդիր հայ նոյնը կը ցանկայ և իւր կարողութեան չափով կը նպաստէ իսկ, տեղն եկած ժամանակ, այդ բարենպաստակ հաստատութեան,

Կ. Վ.

Կիւրակէ յունիս 18-ին կուսակրօն քահանա-յութեան աստիճան ստացան Գպրեմանուց եօթն անդրանիկ սաներ, որք երեք տարի յառաջ աւագ սարկաւագութեան ձեռնադրութիւն ստացած էին, առանց իրենց ուսանողական ընթացքը խափանելու,

Ձեռնադրութեան հանդիսագիրն էր Գերապա-տիւ Տ. Մաղաքիա Ս. Եպիսկոպոս Օրմանեան, Ար-մաշու փ. վանահայր և Գպրեմանուց վերատեսուչ, որուն ձեռօք Գպրեմանքը բացուած էր և որ մինչև ցայժմ կը վարէ իւր պաշտօնները՝ աստուածաբա-նական և իմաստասիրական ձիւղերու ուսուցչութիւնն ալ վարելով ի միասին, Իսկ խարտաւիչակութեան պաշտօնը կատարեց Աթ. Տ. Եղիշէ ծայրագոյն վար-դապետ Դուրեան, Գպրեմանուց ուսումնարանին տե-սուչ և ուսուցիչ միանգամայն, Դուրեան վարդապե-տի յատուկ ձիւղերն են հայկաբանութիւն և մատե-նագրութիւն և փիլիսոփայական պատմութիւններ,

Իսկ եօթն նորընծայներն որք յունիս 18-ին առտուն կուսակրօն քահանայութեան օծում և ե-րեկոյին արեղայութեան վեղար ստացան՝ հետեւեալ-ներն են.

1. Տ. Բարդէն արեղայ Կիւլէսերեան, յառա-ջըն Յարութիւն սարկաւագ, Այնթապցի՝ Կիլիկիոյ վիճակէն, 28 տարեկան,

2. Տ. Խոսրով արեղայ Պէհրիկեան, յառաջն Խաչատուր սարկաւագ, Զարացի՝ Սեբաստիոյ վիճա-կէն, 27 տարեկան,

3. Տ. Զաւէն արեղայ Տէր Եղիայեան, յա-ռաջն Միքայէլ սարկաւագ, Պաղտատցի, 27 տարե-կան, աւագերէց Տ. Աւետիք քահանայի որդին,

4. Տ. Մուշեղ արեղայ Սերովբեան, յառաջն Արտաշէս սարկաւագ, Ալանպեկցի՝ Նիկոմիդիոյ վի-ճակէն, 27 տարեկան,

5. Տ. Սմբատ արեղայ Սաուդէթեան, յառաջն Դրիգոր սարկաւագ, Ադարաղարցի՝ Նիկոմիդիոյ վի-ճակէն, 25 տարեկան,

6. Տ. Աղան արեղայ Համամեան, յառաջն Նշան սարկաւագ, Ապուշեղցի՝ Ակնայ վիճակէն, 25 տարեկան,

7. Տ. Մաշթոց արեղայ Փափազեան, յառաջն
Ներսէս սարկաւազ, Վանեցի 25 տարեկան, որդի
Հանգուցեալ Մեսրոպ վարդապետի:

Յիշեալ եօթն արեղաները իրարու դասընկեր-
ներ են, և Գպրեվանուց առաջին շրջանին մէջ ըն-
դունուած 16 աշակերտներուն մնացածներն են:
Իրենց ուսումնական ընթացքը վեց տարի տևեց և
այդ վեց տարիներու մէջ ընդունած դասերը հե-
տևեալներն եղան:

Կրօնագիտական ուսմանը — Վարդապետութիւն Հա-
յայտանեայց եկեղեցոյ — Սրբազան պատմութիւն
— Պատմութիւն Հայ եկեղեցւոյ — Ծիսագիտութիւն
Հայ եկեղեցւոյ — Չայնագրութիւն եկեղեցական:

Ս. Գրոց ուսմանը. — Ներածութիւն Հին և
Նոր Կտակարանի — Բնաբանութիւն — Մեկնաբա-
նութիւն:

Աստուածաբանական գիտութիւնը. — Բնական — Տե-
սական — Բարոյական. — Նկեղեցական պատմութիւն —
Նկեղեցական իրաւագիտութիւն — Սրբազան բնմա-
սացութիւն:

Խմաստասիրական գիտութիւնը. — Տրամաբանու-
թիւն — Հոգեբանութիւն — Բարոյական փիլիսոփա-
յութիւն — Պատմութիւն փիլիսոփայութեան —
Պատմութիւն կրօնից — Քաղաքական տնտեսութիւն:

Բնական գիտութիւնը. — Կենդանաբանութիւն —
Մարդաբանութիւն — Փորձառական բնագիտութիւն
— Բնալուծութիւն:

Հասկական գիտութիւնը. — Թուաբանութիւն —
Հանրահաշիւ — Ներկրաչափութիւն — Տոմարակալու-
թիւն:

Հայերէն. — Գրաբար և աշխարհարար քերական-
ութիւն — Գրութիւն — Գրականութիւն — Մատե-
նագրութիւն:

Դաղդիներէն. — Քերականութիւն — Թարգմանու-
թիւն — Գրութիւն:

Տաճկերէն. — Քերականութիւն — Թարգմանու-
թիւն — Գրութիւն:

Յունարէն և լատիններէն և Անգլիներէն. — Սկզբ-
բունը. Պատմութիւնը. — Ազգային. — Օսմանեան —
Ընդհանուր՝ հին և միջին և նոր և ժամանակակից —
Աշխարհագրութիւն և Տիեզերագրութիւն:

Այս ամեն ուսմանց համար տարուէ տարի քըն-
նութիւն տուած և գոյնպէս դասարան փոխուած են:
Չեղնագրութեան առթիւ Ամենապատիւ Ս. Պատրի-
արքի կարգադրութեամբ մի մի աստուածաբանական
և հայկաբանական գրութիւններ մատուցին:

Ընթացաւարտութիւննի պսակելու համար սկը-
սած են մի մի քննական ուսումնասիրութիւն պատ-
րաստել (այսինքն է these) համալսարանական սո-

վորութեանց համեմատ, և անով պիտի ստանան
Գպրեվանուց վարդապետութիւնը, գաւաղանի իշ-
խանութեամբ, և ազգային և եկեղեցական դպրու-
թեանց և գիտութեանց մասնագիտութեան իրա-
ւամբ, Պատրաստելիք ուսումնասիրութիւնները վար-
դապետական և պատմական և մատենագրական պա-
րունակութիւն պիտի ունենան, և իրր նիւթ առ-
նուած են ազգային մատենագրութեան նշանաւորա-
գոյն անձնաւորութիւններ:

Գպրեվանքն այս ձեռնագրեալներէն զատ ու-
նի եօթն սարկաւազներ ևս, որք հինգերորդ և
չորրորդ դասարանները կը լրացնեն: Կան ևս երրորդ
դասարանը լրացնող տասուերկու դպիւններ. և առա-
ջիկայ սեպտեմբերին առաջին դասարան մը ևս պիտի
կազմուի քսան աշակերտներով, ընթացաւարտ դա-
սարանին տեղ:

Այդ առթիւ քանի մը խօսք ալ աւելցնեմք
Արմաշու վանքին անցեալին վրայ:

Արմաշու վանքն արեւմտեան գաղթականութեանց
միակ վանքն է, զի Փգրը Հայոց վանքերը անցնելէ
յետոյ զրեթէ ուրիշ վանքի չեմք հանդիպել, և
Յոնիոյ, Միւսիոյ, Բիւթանիոյ, Բիւզանդիոյ և
Թրակիոյ բազմահայ գաւառները Արմաշէ զատ
վանք և ուխտատեղի չունին, և այս ամեն վի-
ճակներուն բարեպաշտական կեդրոն եղած է Ար-
մաշ, և այժմ ալ նոյնպէս է:

Արմաշու վանաց հիմնարկութիւնն եղած է
1611-ին և հիմնադիրն եղած է Թագեոս եպիսկո-
պոս նուիրակ Ս. Էջմիածնի, ժամանակակից Մով-
սէս Տաթեւացի կաթողիկոսին, այդ հոգեւոյս անձին
նկատմամբ Արմաշու վանաց մէջ գտնուող տեղեկու-
թիւնք յոյժ անկատար են, և ցանկալի էր որ Մայր
Աթոռոյ զիւանէն պարտուպատշաճ լուսարանու-
թիւնք քաղուէին:

Երկու դարու չափ Արմաշու վանքն եղած է
նշանաւոր ուխտատեղի մը և Նիկիմիդիոյ վիճա-
կին աթոռանիստը. հարկաւ վարժարան ալ ունե-
ցած է, այլ ասով աւելի նշանաւոր եղած չէ:

Արմաշու նոր կազմակերպողը և օրինաւոր
ժառանգաւորաց վարժարան հաստատողը եղած է
Բարդուղիմէոս արքեպիսկոպոս Վապուտիկեան 1785
թ-ին, այլ իւր գործը և շինութիւնները կործանուած
են շրջակայ թունակալներու զէնքով 1807-ին, և
վերստին շինող ու կազմակերպողն եղած է Պօղոս
արքեպիսկոպոս Ղարախօջեան 1820-ին, Այդ թուա-
կանէ յետոյ Արմաշ սկսած է հետզհետէ փայլել
յաջորդ առաջնորդներուն օրով, որք եղած են.
Ստեփաննոս արքեպիսկոպոս Աղաւնի՝ յետոյ պատ-
րիարք, Մատթէոս արքեպիսկոպոս Չուխաճեան՝ յե-
տոյ կաթողիկոս և Ստեփաննոս արքեպիսկոպոս

Մաղաքեան՝ յետոյ տեղապահ պատրիարքութեան, Վերջնոյս մահուանէ յետոյ Արմաշու վանահայրութիւնը զատուած է նիկոմիդիոյ առաջնորդութենէ 1866-ին, և լոկ վանահայրեր եղած են Եփրեմ վարդապետ Հափլուճեան և Գէորգ արքեպիսկոպոս Ալեքսանեան, որոց օրով այժմեան նոր տաճարը շինուած է և տպարան ալ բացուած: Գէորգ եպիսկոպոսի տարածամ մահուանէ յետոյ վանահայր ընտրուած է 1872-ին Խորէն արքեպիսկոպոս Աշքեան, որուն օրով նախ զիշերօթիկ վարժարան մը բացուած է: այլ շուտով փակուած է զանազան պատճառներով, և վանքն այլ Լքեալ և անկեալ վիճակի մը հասած է: Խորէն եպիսկոպոսի 1888-ին պատրիարք ընտրուելէն յետոյ կենդանական վարչութիւնը ձեռք առած է Արմաշու վանքը, յատուկ խնամակալութիւն հաստատած և Դպրեմանքն ալ բացած 1889 ին, Դպրեմանուց թէ վանահայրական և թէ վերատեսչական պաշտօնները նոյն թուականին յանձնուեցան Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեանին, որև ցարդ կը գտնուի իւր պաշտօնին վերայ և կը վարէ զայն հովանաւորութեամբ խնամակալութեան, որոց նախագահն է Առաքանդեոսի Ս. Պատրիարքը:

Դպրեմանուց անդրանիկ պտուղներն են եօթն նորընծայ արեղաներն, որոց վերայ խօսեցանք ի վերոյ:

Պ Ա Ր Ս Կ Ա Հ Ա Յ Ք:

ԽԱԶԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՏԵԱՆԻ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ ԲԵՐԱԾ ԶՆՈՒԹՈՒՆՆԵՐԸ:

(Շարունակութիւն) 4.

Բ. Թաւրիզի Բերդաթաղի Աստուածամօր Եկեղեցուց բերածները.

18 Մի եպիսկոպոսական խոյր՝ առաջին երեսի վրայ խաչեցեալ Յիսուսի պատկերն է, խաչափայտի երկու կողմին մի մի սգաւոր կին, որոնցից մինը թերևս Աստուածամայրը լինի, միւսը Մարիամ Մագթաղենացին, իսկ կանանցից բարձր երկու հրեշտակներ ամպերի մէջ, իւրաքանչիւրի ձեռին մի մի սկիհ, որոնց մէջ հաւաքուում է Յիսուսի ձեռների գամատեղերից հոսած արիւնը: Հրեշտակներից բարձր խաչափայտի վրայ՝ միկողմը արեգակ, միւս կողմը կիսալուսին: Խաչեցեալ Յի-

սուսի կողքից արիւն և քուր է հոսում: Փրկիչը գլխիկոր, լուսոյ պսակը գլխին, կարմրագոյն զենքակր կամ սիածանկին կապած: Սգաւոր կանայք լուսոյ պսակով ոսկեթել զեղնագոյն վերնազգեստով, բաց վարդագոյն պատմունճանով, կանանց մինի ձեռքերը խաչած կողքին, միւսը ցաւակցաբար երկու ձեռքերի մատները իրար մէջ անցկացրած: Խաչափայտի տակ նկատուում է գանգ և ոսկրներ: Թագի այս երեսի լուսանցադարձը գործուած է ոսկէ և արծաթեայ թելերով՝ ժապաւինաձև, փռուած վարդեր և տերեւներ: Յիշատակագրութիւնն է՝ խաչափայտի գլխի տախտակի գրերը. «Յ. Ն. Թ. Հ. »: Իսկ խաչափայտի տակ երկու տողից բաղկացած յիշատակագրութիւնն այս է. «Շինեցաւ թագըս արդեամբ Մկրտիչ վարդապետիս ըաղիշեցոյ ի վայելումն անձին իմոյ »: Սոյն երեսի քարերն են՝ Հինգ կարմիր, տասը կանաչ, 8 սպիտակ, զանազան մեծութեամբ կիսաթանկագին քարեր: Կանաչ քարերից մինը ընկած է: Միւս երեսի ասեղնագործ նկարը ներկայացնում է Աստուածամօրը գրկած Յիսուսին, բազմած աթոռի վերայ, երկուքի գլխին լուսոյ պսակ. Աստուածածնայ վերնազգեստը ոսկեթել զեղնագոյն, իսկ պատմունճանը բաց վարդագոյն: Աստուածամօրից բարձր մի զոյգ յոքած հրեշտակներ, թագը բռնած, իսկ թագից բարձր Հոգին սուրբ ազաւակերպ:

Աթոռի երկու կողմին մի մի զոյգ փորագիր հրեշտակներ: Առաջնադարձը նոյն, ինչ որ միւս երեսին: Յիշատակագրութիւնն է՝ «Եւ յետ վճարման կենացս լիցի յիշատակ ի զուտն Դարաշամբու սուրբ Ստեփաննոսի «նախաձկային »: Սոյն երեսի քարերը. 7 հատ կապոյտ, 11 հատ կանաչ, Հինգ հատ կարմիր վարդագոյն, 16 հատ սպիտակ, զանազան մեծութեամբ քարեր: Այս երեսի կանաչ քարերից ևս մինը ընկած է: Մեծութիւնն է՝ բերանի լայնութեան տրամագիծը 29 սմ, իսկ թագի լայն մասը 35 սմ, բարձրութիւնը 43 սմ: Արտախուրակները նոյնպէս, ինչպէս թագը մանիշակագոյն թաւշի վրայ, ա-

սեղնագործ. լայն ծայրերին լուսաւորիչը ըզգեստաւորուած հայրապետական զգեստներով՝ երկճիւղ խոյրը դրած, գաւաղանը բռնած, կանքեւր կախած. բաց կանաչ եմիփորոն, սկիւթել շուրջառ, արծաթաթիւ շապիկ, Արտախուրակների մեծութիւնն է՝ երկարութիւնը 41 սմ. լայնութիւնը 6—9 սմ. երկու ծայրից: Թագի և արտախուրակների աստառը վարդագոյն ատաւից: Այս թագի ասեղնագործած պատկերները տյնքան կենդանի և արտայայտիչ են, որ կարծես նկարած լինին և ոչ թէ ասեղնագործած. համեմատած նախկին թագի հետ, շատ բարձր և շատ հմուտ արհեստագէտի գործ է: Մկրտիչ վարդապետ Բաղիշեցին ասելով է 15—16 դարերում և իր ժամանակի երգիչներից մէկն է եղել.* ուրեմն այս թագը մօտաւորապէս 300 տարուայ գործ պիտի լինի թէպէտև թուականը չէ նշանակուած վրան:

19. Մի ծոցուրար շաքանակագոյն աթլատի վրայ գործած, երկճիւղ, իրար կոճկած արգեօք ուրա՛ր է եղած, ծոցուրար են շինել, թէ հէնց սկզբից այնպէս են եղել պատրաստելիս երկճիւղ ծոցուրարներ՝ չորս տեղից կոճկած:

Այս ծոցուրարի վրայ կան արծաթաթիւ գործած չորս պատկերներ. կաթուղիկէաձև խորանների տակ մի կողմ առաքեալն Պետրոս, միւս կողմը Առաքեալն Պոլոս. Պետրոսը արծաթեայ լուսոյ պսակով, գլխի և մարուսի մազերը ալեխառն, վերնազգեստը մոյգ կարմիր, պատմունձանը կապոյտ թելերով, ստուերները սպիտակ արծաթաթիւ, գուլպաները սև և սպիտակ, աջ ձեռքով խաղաղութիւն է տալիս, ձախով մի զոյգ բանալիք բռնած: Պոլոսն ունի նմանապէս նոյն ձևի տարազ, միայն վերնազգեստը բաց կարմիր և նախշուն, աջ ձեռքով մի դաշոյն է բռնած, ձախ ձեռքը գէպ առաջ մեկնած: Խրաքանչիւր առաքեալի կողքին մի մի զոյգ հաւասարակող քառա-

թեւ խաչեր: Առաքեալի պատկերից Պետրոս ստորև ասեղնագործած է Գրիգոր լուսաւորչի պատկերը, իսկ Պոլոսից ստորև Գրիգոր աստուածաբանինը. երկուսն էլ լուսոյ պսակով և հայրապետական զգեստներով: Լուսաւորիչը խաչակնքում է՝ իսկ Աստուածաբանը ստոր գիրքն է գրկած. երկճիւղ թագերով, կապոյտ շուրջառ, բաց կանաչ եմիփորոն, սպիտակ շապիկ և կարմիր ծոցուրար (Յ) սպիտակ միտք նախշուն գուլպաներով: Խրաքանչիւրի ամէն մի կողմը մի հաւասարաթեւ խաչ. պատկերներից բարձր ծոցուրարի սրտի վրայ ասեղնագործած է 7 1/2 սմ. արամագծով երկու բոլորակ շրջանակ, մէջ տեղը խաչեր և խաչերի թւերի կոճակներում՝ «տր. ած. ՅԱ. ԶԱ.», իսկ պատկերների գլուխների երկու կողմերին «Առքն. Պետրոս. «առքն պաղոս» «գրգր լսւրչ» «գրգր. ածքն»: Պատկերների տակը ծոցուրարի ներքևի լիշատ սկարանը. «Յիշատակ է ուրարս մահդասի Յեաւչինն եւ կենակցին մհկուպիքային, եւ ծնողացն եւ զաւակացն, եւ ամենայն զարմացն ի դուռն սուրբ յարութեան թվ. ՌՃԺԴ» (16՝5 Փրկչ.): Մեծութիւնն է՝ երկարութիւնը 150 սմ. խրաքանչիւր ճիւղի լայնութիւնը 15 սմ. վզնոցի կողմը կարկատած և համաձշ երեք կտոր աթլատից: Աստառը կապոյտ, սպիտակ և գոյնզգոյն կաւաւով կարկատած:

20. Մի ուրիշ երկճիւղ ծոցուրար կարմիր աթլատի վրայ ասեղնագործած, երեք թուփ ծաղիկներ խրաքանչիւր կողմի վրայ, իսկ ծաղիկեայ թուփերի մէջ և երկու հաւասարաթեւ խաչ. բոլոր գործուածքի մեծագոյն մասը սկիւթել, փոքր մասը արծաթաթիւ, իսկ մի աննշան մասն էլ մետաքսաթեւ՝ սև, կանաչ, դեղին, սպիտակ, շագանակի և մանիշակի գոյն: Լուսանցազարդերն են ծաղկազարդեր ժապաւինաձև իրար հագցրած, երեք տեղից արծաթեայ կոճակներով կոճկած, տակի մասը սկիւթել ծոպերով: Յիշատակագրութիւնն է, առաջին ճիւղի վրայ՝ «Յիշատակ է ուրարս դշտեցի դիւանուն ու ծնողացն սարգսին ու մարիամին թվին ՌՃԺԱ» (1702

* Տես Ն. Զարման. «Հին Հայ երգիչներ», սոյն ամի V է.

Փրկչ): Երկրորդի գիրը՝ «Յիշատակ է Հռիփսիմէ եւ ընթանին ի վայելումն Ստեփանոս վարդապետին» ամէն: Կոչուրարիս ծաղիկնելի գլխի գիրը՝ «վերստին ստացող սորին զգաւ լուստն եւ զսողոմոնն յիշեցէք ի Զրիստոս»: Աստուր գոյնգոյն շերերով քսթանանման մետաքս: Մեծութիւնն է՝ երկարութիւնը 150 սմ: Խորքանչիւր ճիւղի լայն կողմը 30 սմ: Լայնութիւնն հեղը 19 սմ:

21. Մի կոնքեռ գործած սև ավետի վերայ եւ ներկայացնում է Աստուածամօրը Յիսուսին գրկած. երկու հրեշտակներ մի ձեռքով Աստուածամօր գլխին մի կաթնալաճե թագին բռնում միւս ձեռքով ոլորած թղթեր. Յիսուս կանգնած մի ուրս (Յ) ձեռքին, ոտների տակ մի այլակերպ վիշապ (Յ): մի կողքին խաչաձև աշտանակ վիշապագլուխ պատուանդանով, աշտանակի կողքերին էլ փորթիկ խնկաման եւ մի պատուան, որի միւս կողքին մի ծաղկաման ծաղիկներով իսկ վերեւը մի աստղ. ջրոս կողմը լուսանքներում վրացիէն խոցորի մի արձանագրութիւն 8 տողից, որը դժուարացան կարդալու նոր վրացիէն գիտեցող անձինք: չորս անկիւններում չորս խաչ. մեծութիւնն է 32X32 սմ. երկարութիւնը եւ լայնութիւնը հաւասար:

22. Փղոսկրեայ զաւազանի մի գլուխ՝ ր ներկայացնում է մի կնոջ պատկեր գանգուր մաղթութիւն նոյն պատկերը չորս կողմում կրկնուած եւ միացած ընդհատ մագերով կրծքին խաչամբարջը նուրբ քանդակների մի հանգույց է: Երկարութիւնը 15 սմ:

23. Մի ծածկոց գործած՝ սպիտակ բարակ եւ նուրբ քսթանի վրայ, լայն եւ փաթթամ լուսանցարգով, նկարած գոյնգոյն վարդենիք. կսկանները եւ ծաղիկները մետաքսեայ թելի՛րից, իսկ կոթերը եւ ճիւղերը ոսկեթել: Անման մի գործ է սա. մէջ տեղը բռնում է ճաճանչաւոր արեգակ, իսկ նորա մէջ սկիհ, որի վրան կանգնած է Փրկիչը, կարմիր սփածանելին կապած եւ ձեռքերը պարզած. իսկ Փրկիչի ետեւի կողմից երեւում են խաչսփայտը, գեղարդը եւ երկար կաթաւոր միգուրդ (Յ), գե-

ղարդի հետ խաչվառք դրած. սկիհի մի կողմը ունելիք, միւս կողմը շղթայ. շղթայի տակ մի մուրճ. ունելիքի տակ երեք գամ (Յ), գամի եւ ունելիքի կողքին մի սպիտակ սիւն, սեան վրայ մի աքալաղ, աքալաղի զիմա ց խաչ ուղայտի թեւից մի կորեակի փունջ կախած. խաչափայտի միւս ծայրից մի շղթայ երեք կտորից (Յ). շղթայի կողքին մի փայտեայ սանդուղք 13 սանաւեղերով, ճաճանչաւոր արեգակի շուրջը չորս փորթաղի Սերովբէներ եւ չորս էլ հրեշտակներ, չորս անկիւններում չորս մեծաղի հրեշտակներ կանգնած. բոլոր հրեշտակները եւ սերովբէների մագերն սև են գանգուր. հրեշտակների գլուխների լուսայ պտակները ոսկեթել, սիւնները արծաթաթել, երեսները ցորենագոյն մետաքսի թելերով: Լուսանցարգից դուրս ոսկեթել ծոպեր: Յիշատակագրութիւնն է՝ մանր ոսկեթել երկաթագրով՝ «Յիշատակ է սուրբ սկոյս ծածկոց. Ալկընցի գրեգորի որդի Ղազարին սրապիոնին եւ մնացականին եւ փորթիկ գրեգորին եւ մըկրտչիդ եւ քարեմիտ մօրն իւրեանց Եսային ի դուռն սուրբ թումայու առաքելոյ վանացն թվն. ՌՃԼ» (1741 Փրկչ): Խոշոր ծաղկագիր երկաթագրով՝ «ՌՄԼԼ» (1741 Փրկչ) թվին աներ եղեն սուրբ վանքն թումայի եւ զայս անկեալ ի ձեռս թշնամեաց արդեղեւ ազատիլ խօջա մինասեան թօրխան աղաի որդոցն զորս վերստին ընծայեցին ի նոյն վանան յիշատակ ծնողաց իւրեանց թարխան աղաին եւ ըժաղա տիկնոջն թվին ՌՄԽ-ին» մեծութիւնն ծածկոցիս 110X110 սմ. քառակուսի. աստուր մանիշակագոյն մետաքսէ կտորից նորագած:

Բացի սոյն եկեղեցական հին գիտական ժողովածուից խաչիկ վարդապետ Բերեւէ՛ իւր հետ բազմութիւ հրովարտակներ Տաճիկ եւ Պարսիկ տիրապետողներից, կանդակներ էջմիածնայ կաթուղիկոսներից, կալուածագրի զանազան գիւղօրէից եւ Արարատականի Հայոց վանօրէից, այն է սուրբ Թագէտոս Առաքելոյ եւ Ղարաշամբու, որեւ Մաղարդայ սուրբ Ստեփաննոսի վանօրէից անուամբ: Սոյն պատ-

մական վաւերութիւնքի և նոր բերած թանգագին և հաղուագիւտ ձեռագրերի տեղեկագրերը շուտով կը ծանուցանուին Արարատի ընթերցողներին:



ՊԵՏՏՈՆԼԿԵՆՔ:

ՔԱՂՈՒԱՆՔ ՎԵՀՈՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԿՈՆԴԱԿՆԵՐԻՅ:

Կոնդակ յանուն փոխանորդի նոր նախիջևանի Մխիթար վարդապետի Տ. Մկրտչեան, որով շնորհի նմա վարդապետական լանջախաչ ականակու: Տ. 276.

Կոնդակ յանուն Տիրայր վարդապետի Տէր Յովհաննիսեան՝ նախանգամի Հոգ. Կոնափարութեանց և քարոզչի Եկեղեցեաց Մոսկուայի և Պետերբուրգի, որով շնորհի նմա վարդապետական լանջախաչ ականակու: Տ. 277.

Կոնդակ յանուն Մխիթար վարդապետի փոխ. ն. նախիջևանի, որով թողյաւորի նմա լանջաչ օրորդական գպրոց ի գաւթի Ս. Նիկողայոս Եկեղեցւոյն ն. նախիջևան քաղաքի, համար 307.

Կոնդակ յանուն Պ. Մակարայ իմպաւեան, որով թողյաւորի նմա տպագրել զաշխատասիրութիւն իւր զձայնագրեալ խորհրդատետր պատարագի: Տ. 325.

Կոնդակ օրհնութեան և զօհունակութեան յանուն Գէորգ Եղայի և Տիկին Եւայի Կրասիլնիկեանց, սակա հիւրասիրելոյ և հիւրընկալելոյ նորին Սրբութեան ի տան իւրեանց եռամսեայ ժամանակաւ ի ն. նախիջևան: Տ. 330.

Կոնդակ յանուն Արրահամ քահանայի Աստուծոյն միարանի ս. Փրկիչ Եկեղեցւոյ Եկաղցիայ, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան Առաջն. Տփիսեաց Գեր. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրբեանց, Տ. 343.

Կոնդակ յանուն Կարապետ քահ. Տ. Գրիգորեան միարանի ս. Փրկիչ Եկեղեցւոյ Եկաղցիայ, որով շնորհի նմա աւագ քահանայութիւն ըստ միջնորդութեան Գեր. Առաջ. Տփիսեաց, Տ. 344.

Կոնդակ յանուն Գէորգ Արքեպիսկոպոսի Առաջնորդին Տփիսեաց, որով պատուիրի նմա առնել նոր ընտրութիւն Տեսչի վասն ներսիսեան հոգ. գպրանոցին Տփիսեաց, Տ. 348.

Կոնդակ յանուն միացեալ Հոգարարձութեան գպրո-

ցաց Աղէքսանդրապոլի, որով հաստատի ի պաշտօն նախագահի Հոգարարձութեան յաջորդ փիլանին Տ. Բաղրատ վարդապետ Թաւադաւեան և Յովհաննէս Տ. Միրաքեան ընդհանուր տեսուչ գպրոցաց քաղաքին, Տ. 392.

Կոնդակ յանուն նախագահի և հոգարարձութեան ներսիսեան գպրանոցի Տփիսեաց, որով հաստատի ի պաշտօն տեսչութեան նոյն գպրանոցի Սամուէլ Բալաղեան, Տ. 393.

Կոնդակ յանուն հոգարարձութեան թեմ. գպրանոցին ն. նախիջևանի, որով հաստատի ի պաշտօն տեսչի գպրանոցին Գալուստ Կարապետեան Զարբիսեան, Տ. 409.

Կոնդակ յանուն Եղնիկ քահ. Գիլանեան, գործակալի կողմանց Թալինոյ, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, Տ. 418.

Կոնդակ յանուն Եղիշէ քահ. գործակալին Զիվանչիրու, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Առաջնորդին Արցախու Կարապետ եպիսկոպոսին Եյփաղեան, Տ. 421.

Կոնդակ յանուն Խորէն քահանայի Իսկէնտէրեան ի Հուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջ. Արցախու, Տ. 422.

Կոնդակ յանուն Աղէքսանդր քահ. Բաղդասարեան ի Հուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդին, Տ. 423.

Կոնդակ յանուն Վրթանէս քահ. գործակալի կողմանց Խաչէնի, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդին, Տ. 424.

Կոնդակ յանուն Վահան քահ. Հահումեան ի Հուշի, որով շնորհի նմա Կամիլաւկա, ըստ միջնորդութեան նոյն Առաջնորդին, Տ. 425.

Կոնդակ յանուն Բարսեղ Իսթանպուլեան ի Կ. Պոլիս, որով հաստատի ի պաշտօն Գանձապետութեան Մայր Եկեղեցի ի Կ. Պոլիս, ըստ առաջարկութեան Լամնապատիւ Պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Սատթէոս Ս. Արքեպիսկոպոսի Իզմիրեան, Տ. 481.

Ըստ հրամանի նորին Վեհափառութեան ընդունուած են ի շարք գասագրաց մեր Եկեղեցական—ծխական գպրոցներին՝

1. Քիշմիշեան — նախադիտելիք Բուսարանուլեան.
2. Ճաղարեզեան — Հայոց լեզու բ. տարի.